«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Տառի գրուսուցման դասին ներկայացվող դիդակտիկական պահանջները և դրանց իրականացման մեթոդական քայլաշարը
ԱՌԱՐԿԱ	Դասվար
ՀԵՂԻՆԱԿ	Արմենուհի Մուշատյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի թիվ 8 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……2

ԳԼՈՒԽ 1. Տառի գրուսուցման դասին ներկայացվող դիդակտիկական պահանջները և դրանց իրականացման մեթոդական քայլաշարը……...4

1.1. Տառի գրուսուցման դասին ներկայացվող ուսուցանող ընդհանուր պահանջները……...…….....4

1.2. Տառի գրուսուցման իրականացման քայլաշարը……9

ԳԼՈՒԽ 2. Փորձարարական աշխատանք…….....13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….….....17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……18

ՀԱՎԵԼՎԱԾ……19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեպի գրաճանաչություն, որպես կարդալու և գրելու գործընթացի ձևավորման ճանապարհ, անցնում է յուրաքանչյուր ոք՝ արհեստավորից մինչև գիտնական: Բոլորն էլ այդ շրջանի իրենց հիշողություններն ու տպավորությունները զուգորդում են առաջին ուսուցչի, նրա վարած դասերի հետ, որոնք էլ անմիջականորեն արտացոլել են տվյալ ժամանակաշրջանի կրթական մարտահրավերները:

Հետազոտության արդիականությունը.

Այսօր ժամանակակից դպրոցում գրաճանաչության դասավանդման խնդիրները հիմնականում նույնն են, սակայն մոտեցումներն ու պահանջները քիչ ուրիշ են, տարբերվող: Գրաճանաչության դասավանդման վերաբերյալ մեր պատկերացումները ժամանակի ընթացքում տրանսֆորմացվել են, փոփոխվել, հարստացել նոր փորձով ու մեթոդաբանությամբ՝ ուսուցչին մղելով ստեղծագործելու, նոր լուծումներ փնտրելու՝ աշակերտի ուսումնառությունը հետաքրքիր և առաջանցիկ կազմակերպելու համար:Տառուսուցման մեթոդական շղթայի ներկայացմամբ՝ մեծ ծավալի պատրաստի գիտելիք հաղորդելը, ուրիշների մտածածը մեխանիկորեն սերտելն այլևս վաղ անցյալում են՝ իրենց տեղը զիջելով որոշակի տրամաբանական , ինքնուրույն և ստեղծագործական գործընթացների արդյունքում ձեռք բերած գիտելիքին, ներառարկայական և միջառարկայական կապերի ապահովմամբ՝ աշակերտի ամբողջական զարգացմանը:

Հետազոտության խնդիրները.

- ՈՒսումնասիրել վեց տարեկանների ուսուցման կազմակերպման առանձնահատկությունները,
- Դիտարկել տառերի դասավանդումը երեխայի հոգեբանական զարգացման համատեքստում
- Մշակել գրաճանաչության դասավանդման ժամանակակից մոտեցումներին ,

- Կազմակերպել գրուսուցումը, որ այն «ցավոտ» չլինի. գրուսուցման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները
- Ծրագրել տառուսուցման դասի ինտեգրման սկզբունքները ,
- Մշակել տառուսուցման դասի պլանավորման մեթոդական քայլաշարը,
- Ներկայացնել մանկավարժական զինանոցը՝ նոր մեթոդներով և գործնական խորհուրդներով:

Հետազոտության նպատակը.

- Բարձրացնել դիդակտիկ և շարժուն խաղերի դերը դասի ժամանակ,
- Կատարելագործել գրաճանաչության արդյունավետ դասավանդման այնպիսի գործիքներ, որոնք աշակերտին հնարավորություն կտան կապակցելու տարբեր ոլորտների մասին իրենց ունեցած գիտելիքները՝ սովորածը իմաստավորելու և գործնականում այն կիրառելու համար:

Գրաճանաչության կազմակերպման գործընթացի բովանդակությանն ու մեթոդներին ներկայացվում են սովորողների տարիքային առանձնահատկություններով, կարիքներով և հնարավորություններով պայմանավորված որոշակի պահանջներ: Գրաճանաչությունը կազմակերպելիս պիտի հաշվի առնել ուսուցման մատչելիության, զննականության, հաջորդականության, պարզից դեպի բարդը, ծանոթից անծանոթը գնալու և անհատականության սկզբունքները՝ դասի ժամանակ կարևոր դեր տալով ինչպես դիդակտիկ,անպես էլ շարժուն խաղերին: Գրելու կարողությունների ձևավորման հարցում պետք է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի անհատականության առանձնահատկությունը, կարևորել այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ զննականությունը, գիտակցությունը և այլն: Միաժամանակ չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր երեխայի ձեռագիր խոսում է նրա հոգեկան գործընթացի զարգացման վիճակի մասին: Տառաճանաչության գործընթացի առաջին և կարևոր խնդիրը տվյալ տառի հնչյունի ընկալումն է:

ԳԼՈՒԽ 1. Տառի գրուսուցման դասին ներկայացվող դիդակտիկական պահանջները և դրանց իրականացման մեթոդական քայլաշարը:

1.1. Տառի գրուսուցման դասին ներկայացվող ուսուցանող ընդհանուր պահանջները:

Աշակերտի գիտելիքներին մի փոքր կայծ տալու համար ուսուցիչն իր մեջ պետք է լույսի մի ամբողջ ծով կուտակի: Վ.Սուխոմլինսկի Ուսման հաջողությունը երեխայի ներքին ուժերի միակ աղբյուրն է, որը ծնում է դժվարությունները հաղթահարելու եռանդ, սովորելու ցանկություն: Վ.Սուխոմլինսկի Տպագիր հիմքով տետրերի միջոցով գրելու ուսուցման (վայելչագրության) ուղղությամբ աշխատանքն սկսվում է դեռևս գրաճանաչության նախապայբբենական շրջանում: Այս շրջանի ուսուցողական խնդիրներից են մատները գրելուն նախապատրաստելը, հայերենի տառամասնիկների գրությունը, տողի վրա կողմնորոշվելը, տարածական մտածողության զարգացումը: Սրանք կարողություններ են,որոնց վրա գրաճանաչության շրջանում կառուցվում և զարգանում են կարդալու ունակությունները :

Գրաճանաչության այբբենական շրջանի հիմնական խնդիրներն են.

- Զարգացնել և ամրակայել գրենական պիտույքներից օգտվելու, տպագիր հիմքով տետրում կողմնորոշվելու կարողությունները,
- Ամրացնել երեխաների ոսկրամկանային համակարգը (մատների ֆալանգները, դաստակը, ողնաշարը, ուսերը, պարանոցը և այլն),
- Մշակել տառապատկերներն ամբողջական ընկալելու և դրանք տետրում տրված օրինակի համաձայն վերարտադրելու կարողություններ,
- Իրականացնել վանկերի, բառերի, բառակապակցությունների գրուսուցումը վայելչագրության կանոնների համապատասխան,
- Մշակել տպագիր տեքստից ձեռագիր վերարտադրելու կարողություններ: Սովորեցնել գրել մտքով իրար հետ կապված մի քանի նախադասություն,
- Զնավորել գրած բառերի, բառակապակցությունների, նախադասությունների, բնագրի իմաստը հասկանալու կարողություն,
- Մշակել գրությամբ և արտասանությամբ տարբերություն չունեցող բառերն արտագրելու և թելադրությամբ գրելու կարողություն,
- Սովորեցնել հնչյունատառային վերլուծությունից հետո գրառել բառեր և նախադասություններ (3-4 բառից կազմված),
- Գրի առնել ինքնուրույն կազմած նախադասություններ (3-4 բառից կազմված),
- Ինքնաթելադրությամբ գրել փոքրիկ չափածո բնագրեր:

Գրուսուցման աշխատանքները մեթոդապես ճիշտ իրականացնելու համար պիտի նկատի ունենալ, որ գրելու գործընթացն ունի երկու կողմ. բովանդակային, որը վերաբերում է կատարվող գրավոր աշխատանքի բովանդակությանը, և տեխնիկական, որն անմիջականորեն առնչվում է յուրաքանչյուր առանձին վերցրած տառի գրաֆիկական պատկերին և նրա՝ մյուս տառերի հետ ունեցած կապին, բառերի ճիշտ գրության և նախադասություններ գրելիս նրանց տեղին: Ուսուցչի խնդիրն է աշակերտների

գիտակցությանը հասցնել այն ճշմարտությունը, որ գեղեցիկ և գրագետ գիրը և գրավոր տետրի կոկիկ և վայելուչ վարումը նպաստում է այնպիսի անձնային որակների ձևավորմանը, ինչպիսիք են ինքնատիրապետումը, կարգապահությունը, զսպվածությունը, կոկիկությունը, կազմակերպվածությունը և այլն: Պատահական չէ, որ հաճախ ձեռագրով բնութագրում են ձեռագրի տիրոջը: Երեխաների մեջ պիտի ձևավորել այն համոզմունքը, որ գեղեցիկ, ընթեռնելի ձեռագիրը իր գրածը ընթերցողի նկատմամբ հարգանքի դրսևորում է, իսկ առաջին դասարանցու գրավորի առաջին ընթերցողը ուսուցիչն է: Սակայն ուսուցիչն էլ իր հերթին պիտի նրբանկատություն և համբերություն հանդես բերի երեխաների ձեռագրի նկատմամբ՝ նկատի ունենալով, որ.

- Գրելը խոսքային գործունեության ամենաբարդ տեսակն է,
- Գրելը երեխայի անհատականության հետ խստորեն կապված գործընթաց է,
- Գրելու կարողությունները ձևավորվում են դանդաղ՝ երեխայից խլելով մտավոր, ֆիզիկական և հոգեկան մեծ ջանքեր:

Երեխաներին գրել սովորեցնելու բոլոր փուլերում պետք է հիշել, որ գրուսուցման իրականացման գործընթացը հենվում է ուսուցման որոշակի սկզբունքների վրա՝ զննականություն, գիտակցականություն, աստիճանականություն, երեխաների անհատական առանձնահատկությունների հաշվառում, կարդալու և գրելու համատեղ ուսուցում: Գրաճանաչության այբբենական կամ գրուսուցման և նախաայբբենական շրջանների սահմանը հնչյուններից անցնում է տառերին: Այս շրջանի հիմնական խնդիրներն են.

- Ուսուցանել բոլոր հնչյուն-տառերը (ճանաչել 36 հնչյունները և դրանց գրավոր արտահայտությունը՝ հայոց այբուբենի 38 տառերը, ինչպես նաև և կցագիրը),
- Սովորեցնել ճիշտ համադրել հնչյուններն ու տառերը,
- Յուրացնել տառերի համադրումը, • Գործնականորեն յուրացնել վայելուչ գրելու կանոնները,
- Մշակել ամբողջական բառերով սահուն կարդալու կարողությունները,

- Զարգացնել ընթերցանության նկատմամբ սեր,
- Զևավորել ընթերցողական տարրական կարողություններ,
- Զարգացնել խոսքն ու մտածողությունը,
- Հաղորդել լեզվական տարրական գիտելիքներ,
- Իրականացնել ճանաչողական, դաստիարակչական, զարգացնող աշխատանքներ՝ նպաստելով երեխաների անձի ձևավորմանը:

Միաժամանակ չպետք է մոռանալ, որ երեխայի ձեռագրով (ոչ թե լավ կամ վատ գրելը նկատի ունենք, այլ խեղաթյուրված տառերը, տողերի սահմանների, տառերի դիրքի ու չափի ընդգծված խախտումները և այլն) կարելի է որոշել նրա հոգեկան գործընթացների զարգացման վիճակը, և եթե երկար ժամանակ երեխայի ձեռագրի ձևավորման ուղղությամբ ուսուցչի աշխատանքը արդյունք չի տալիս, նշանակում է պետք է մտահոգվել և անպայման դիմել հատուկ մանկավարժի օգնությանը: Երեխաների գրել սովորեցնելու բոլոր փուլերում պետք է հիշել, որ գրուսուցման իրականացման գործընթացը հենվում է ուսուցման որոշակի սկզբունքների վրա՝ զննականություն, գիտակցականություն, աստիճանականություն, երեխաների անհատական առանձնահատկությունների հաշվառում, կարդալու և գրելու համատեղ ուսուցում և այլն: Որպեսզի աշակերտը կարողանա ճիշտ գրել, նախ պետք է «պարզել բառի հնչյունային կազմը և հետո միայն այն գրել»: Գրավոր խոսքն ունի չորս կողմ՝ տեխնիկական կամ գրելու համար անհրաժեշտ նորմաների պահպանում, առանց որի հնարավոր չէ պատկերացնել գրելու

գործողությունը, գրաֆիկական կամ տողերի ու գրի վայելչագրական կողմի պահպանում, ուղղագրական կամ բառի հնչյունային կազմի տառային արտահայտության ճիշտ պահպանում և միտք կամ բովանդակություն, որը գրի առնելիք մտքերի ճիշտ պահպանումն է: Վարժ գրողի համար գրելու գործողությունն այնքան կատարելագործված ու ավտոմատացված է, որ նա իր ուշադրությունը կենտրոնացնում է միայն գրածի մտքի վրա, իսկ դրա արտահայտման ձևը՝ գիրը, տառերի գրելն ու դրանց կապակցումը բառի մեջ, տեղադրումը տողի վրա և այլն, պահպանվում են ինքնաբերաբար՝ առանց հատուկ ջանքերի: Վարժ գրողը երբեք չի մտածում տառամասնիկների ու տառերի ձևի, դրանց զուգակցման և այլ գործողությունների մասին, դրանք այլևս «չեն նկատվում» և «ուշադրության չեն առնվում» վանկերն ու տառերը, չնայած առանց այդ տառերի ու վանկերի բառը ո՛չ կճանաչվեր և ո՛չ էլ կընկալվեր ընթերցողի կողմից: Վարժ գրող մարդու գրելու տեմպը ձգտում է հավասարվել բանավոր խոսքի տեմպին, և հենց այդ է պատճառը, որ հաճախ արագ գրելու պատճառով գրի վայելչագրական կողմը տուժում է: Միանգամայն այլ ձևով է ընթանում նոր գրել սովորողի գրելու գործողությունը, որի մեջ տեխնիկական ու գրաֆիկական կողմի ավտոմատացում դեռևս չկա: Աշխատանքի նոր ու անսովոր լինելու պատճառով երեխան ստիպված է լինում ուշադրությունը հիմնականում կենտրոնացնել գրելու համար անհրաժեշտ տեխնիկական պայմանների ու գրի գրաֆիկական կողմի պահպանման վրա: «Ուզում եմ ընդգծել, որ 6-7 տարեկան երեխաները ունակ են շատ գիտելիքներ ձեռք բերելու, հմուտ ուսուցիչը կարող է բավականին խորությամբ նրանց հաղորդել գիտելիքների ընդարձակ պաշար: Բայց պե՞տք է արդյոք այն փոքրիկներին: Կարիք չկա առաջ անցնել ծրագրից՝ առաջին դասարանցիներին սովորեցնել հետագա տարիների համար նախատեսված գիտելիքները: Չմոռանանք, որ գրաճանաչության շրջանի կարևորագույն խնդիրը երեխաներին հասկանալով, սահուն, արտահայտիչ կարդալ, գիտակցաբար,գրագետ և վայելուչ գրել սովորեցնելն է և տվյալ տարիքի երեխաների ունակություններին համապատասխան բանավոր և գրավոր խոսք կառուցելը:» 1 :

---

1 Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե.,2015, Զանգակ-97 9

1.2. Տառի գրուսուցման իրականացման քայլաշարը

«Տառի գրության ուսուցման ժամանակ ևս հնչյունային վերլուծություն պետք է կատարել՝ այս անգամ անջատված հնչյունի դիմաց դնելով նրա ձեռագիր տառերը: Ուսուցիչը գրատախտակի վրա գրում կամ պատրաստի պլակատի վրա ցույց է տալիս, թե տվյալ տառը ինչ հիմնական մասնիկներից է կազմված, նկարագրում է, թե ինչ հաջորդականությամբ պետք է համադրել այդ մասնիկները, որպեսզի տառն ստացվի, նշում է, թե այդ մասնիկը կամ տառն ամբողջովին մինչ այդ անցած տառերից որին է նման և ինչով: Կարծում ենք, կարելի է օգտագործել նաև տառի գրությունը ցույց տվող հատուկ պլակատներ, որոնց վրա սլաքներով նշված է գրիչի հետագիծը կամ շարժման ուղղությունը: Նոր տառի գրությանը երեխաներին նախապատրաստելու համար ուսուցիչը մատի շարժումով տառը գրել է տալիս օդում, սեղանի վրա, որպեսզի տառապատկերի պարզ ընկալում լինի, ինչպես նաև ապահովվի ձեռագրի համապատասխան շարժումների մշակումը: Դրանից հետո կարելի է անցնել տառի գրությանը, որի օրինակը տրված է տետրում. Առաջադրված տառը պետք է գրել 2-3 նվագով, որպեսզի երեխաները չհոգնեն, և տառապատկերը չաղավաղվի: Երբեմն կարելի է օգտագործել գրելիք տառը կետային հենակներով գրելու մեթոդը, որը թույլ աշակերտների համար շատ օգտակար կարող է լինել: Այս դեպքում բացի տառից ուսուցիչը տալիս է նաև գրելիք տառի կետային հենակները, որպեսզի դրանք միացնելով աշակերտները կարողանան առանց դժվարության ստանալ պահանջված տառը» 2 : Ձեռագիր տառերի ուսուցումը պետք է սկսել նրա հնչյունի գիտակցումից: Հայերենի տառերի հիմնական մասնիկները երեխաները սովորել են գրել գրաճանաչության նախապատրաստական շրջանում: Ցանկացած տառի գրուսուցումից առաջ ուսուցիչը նախ ցույց է տալիս ձեռագիր տառերի փոքրատառը, ապա՝ մեծատառը, դրանք երեխաների հետ միասին համեմատում են տպագիր տառատեսակի հետ,

---

2 Տեր-Գրիգորյան Ա.Ե. Աշխատանք այբբենարանով,Ե.,Լույս

որոշում են նմանություններն ու տարբերությունները և տեղադրում են դասարանի համար տեսանելի տեղում: Այնուհետև ուսուցչուհին գրատախտակի վրա ցույց է տալիս այն մասնիկները, որոնցից կազմված է տվյալ տառը՝ անպայման շեշտելով, որ դրանք իրենց ծանոթ են, և իրենք գիտեն այն գրել: Այս աշխատանքի միջոցով երեխաները ծանոթանում են տառի հիմնական բաղադրամասին, այսինքն՝ կատարվում է տառապատկերի կամ տառի ձևի վերլուծություն:

Տառերի գրուսուցման դասի հիմնական մեթոդական շղթան.

- Կազմակերպական-բացատրական աշխատանք,
- Բառի հնչյունային վերլուծություն,
- Ուսուցանվող նոր հնչյունի առանձնացում բառից,
- Ծանոթություն նորածանոթ հնչյունի ձեռագիր տառերին, համեմատում տպագիր տառերին, նմանությունների և տարբերությունների հայտնաբերում,
- Նորածանոթ տառերի մասնիկների վերլուծություն,
- Նորածանոթ տառի համեմատում ծանոթ տառերի հետ,
- Տառի պատկերում գրատախտակին՝ զուգահեռ բացատրություններով և հաշվով,
- Տառապատկերի ստացում օդում՝ զուգահեռ բացատրություններով և հաշվով,
- Տառապատկերի ստացում թելերով, լարերով,
- Տառի գրուսուցում գրատախտակին,
- Մատները գրելուն նախապատրաստող վարժություններ,
- Աշխատանք տետրում.
    - ✓ Տառի գրուսուցում,
    - ✓ Բառի գրուսուցում,
    - ✓ Բառակապակցությունների գրուսուցում,

✓ Բնագրի գրուսուցում,

- Ֆիզկուլտ դադար:

Գրաճանաչության հիմնական փուլի վերջում աշակերտները պետք է տիրապետեն հետևյալ ունակություններին.

● Հստակորեն և ճիշտ արտաբերել հայերենի բոլոր հնչյունները,

● Որոշել բառի հնչյունային կազմը, բառի մեջ հնչյունների հաջորդականությունը,

● Տարբերել ձայնավոր և բաղաձայն հնչյունները,

● Ամբողջական բառերով կարդալ մատչելի, իրենց տարիքին համապատասխան, փոքրիկ բնագրեր,

● Կարդալիս պահպանել հայերենի շեշտը, առոգանությունն ու տրամաբանական դադարները,

● Հասկանալ կարդացածը, պատասխանել բնագրի վերաբերյալ հարցերին, վերարտադրել կարդացածի բովանդակությունը, կատարել պարզ համեմատություններ, դատողություններ, եզրակացություններ,

● Հայերենի վայելչագրության կանոնների համապատասխան հնչյունատառային վերլուծությունից հետո գրել բառեր, բառակապակցություններ, նախադասություններ (3-4 բառից կազմված),

● Արտագրել կամ թելադրությամբ գրել գրության և արտասանության մեջ տարբերություն չունեցող բառեր, օրինակի հետ համեմատելով կամ շշուկով արտասանելով՝ ստուգել գրվածը,

● Գրի առնել սեփական ուժերով կազմած նախադասությունները, ստուգել և գտնել սխալները:

Մատները գրելուն նախապատրաստելու վարժություններ

1. Ուսուցչի հրահանգով երեխաները սկսում են ծափահարել: Նախ ծափահարում են արագ՝ թաթիկները քնքշությամբ իրար խփելով, հետո ուսուցիչը հաղորդում է. «Դանդաղ, դանդաղ, թույլ, ավելի թույլ, այնքան թույլ, որ գրեթե ձայն չլսվի: Իսկ հիմա մի քիչ ուժեղ, ավելի բարձր, շատ բարձր»:

2. Ուսուցիչը դիմում է երեխաներին.

-Երեխանե՛ր, հիմա մեր մատիկները պիտի պարեն, բայց պիտի պարեն առանձին-առանձին: Նախ երկու ձեռքերի բութիկները (ցույց է տալիս), իսկ հիմա՝ ցուցամատները…
3. Թաթիկներն ափերի կողմով դրված են սեղանին: երեխաներն ուսուցչի հրահանգով նախ ձախ ձեռքի մատներն են հերթով բարձրացնում, ապա աջ ձեռքի մատները՝ մեկ-մեկ: Այնուհետև, փորձում են մատների ծայրերով թույլ, շատ մեղմ կտկտացնել սեղանին: Վարժությունը կրկնել 2-3 անգամ:

ԳԼՈՒԽ 2. Փորձարարական աշխատանք

Փորձարարական աշխատանքս իրականացրել եմ տարիներ առաջ՝ 1-ին դասարանում դասավանդելիս : Աշխատանքիս նպատակն էր հարցուպատասխանի, զրույցի, դիտման մեթոդով համեմատություն կատարել դպրոցից առաջ մանկապարեզ, նախակրթարան գնացած և չգնացած աշակերտների միջև: Դասարանում սովորում էին 35 աշակերտ, որոնցից բոլորը հաճախել էին մանկապարտեզ կամ նախակրթարան, կամ երկուսն էլ հաճախել էին: Դասերի ընթացքում շատ եմ հետևել, դիտել, օգնել աշակերտների աշխատանքներին: Այն աշակերտները, որոնք հաճախել էին նախակրթարան, գրում էին ավելի արագ և մաքուր՝առանց ջնջումների, նույնիսկ, մի քանի աշակերտներ տառերը ճանաչում էին և կարողանում ինքնուրույն գրել: Այն աշակերտները, որոնք միայն մանկապարտեզ էին հաճախել, աշխատում էին լարված և դանդաղ: Ըստ իս երեխայի ընդունակությունները, մաքուր, համաչափ գրելը կախված է ոչ միայն մանկապարտեզ կամ նախակրթարան գնացած աշակերտից, այլև դասվարից և ծնողից: Աշակերտներ կային, որոնք ունեին շատ լավ ընդունակություն, սակայն պարտաճանաչ չէին, դասին ներկայանում էին կիսատ աշխատանքներով, այնինչ կային աշակերտներ, որոնք նույնիսկ լրացուցիչ աշխատանքներ էին կատարած մտնում դասարան: Նրանց մոտ արդյունքը գերազանց էր:

Դասի պլան / Դասը վարում եմ ԽԻԿ համակարգով

Դասարան՝ 1-ին Առարկա՝ մայրենի Դասագիրքը՝ «Այբբենարան» հեղինակ՝ Վ.Ա.Սարգսյան Դասի թեման՝ Օo հնչյուն-տառի ուսուցում

Դասի տեսակը՝ հաղորդող

Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ և իրականացման եղանակները՝ հարցուպատասխան, Մտագրոհ

Անհրաժեշտ նյութեր՝

- Պաստառներ

● Մետաղալարեր

● Կպչուն թղթեր

● Սահիկ

Դասի նպատակը՝

1. Նոր դասի հաղորդում: Օ օ հնչյուն-տառի ուսուցում և ամրապնդում

2. Օ հնչյունով սկսվող բառերի ուղղագրության ուսուցում

3. Անցած տառերի ամրապնդում

Դասի խնդիրները՝

1. Ուսուցանել Օ օ հնչյուն-տառը

2. Տարբերակել և կարողանալ գրել Օօ հնչյուն-տառը

3. Դաստիարակել ընկերասիրություն, փոխօգնություն, նրբանկատություն

4. Զարգացնել աշակերտների հաղորդակցվելը, ուշադրությունը

Դասի ավարտին աշակերտները պետք է՝

Ա. Իմանան՝

- Օօ հնչյուն -տառի գրությունը
- Անցած տառերը

Բ. Կարողանան՝

- Գրել Օօ հնչյուն-տառը
- Ճիշտ արտասանել հնչյունները,կարդալ բառերը, բառակապակցությունները, նախադասությունը
- Ճիշտ վանկատել
- Որոշել բառերի վանկերի քանակը

Գ. Տիրապետեն՝

- Հասկանալով կարդալու կարողությունը

Դասի ընթացքը՝

- Խթանման փուլ
- Կազմակերպչական մաս
- Իրադրույթային զրույց: Օրվա տառը գուշակում են աշակերտները՝ լսելով փոքրիկ քառյակ: Կարդում եմ քառյակը.

  Ես կլոր եմ, կլմլոր եմ,

  Ունեմ գլուխ, չունեմ պոչ,

  Ես օղակ եմ՝ կգլորվեմ,

  Ո՛չ օտար եմ, ո՛չ անկոչ:

  -Երեխաներ ո՞ր հնչյունն անընդհատ կրկնվեց: Ուրեմն մեր այսօրվա հնչյուն տառն է Օ-ն: Նորից կարդում եմ քառյակը, նախապես աշակերտներին ասելով, որ ուշադիր լսեն և թվարկեն օ տառով սկսվող բառերը: Իսկ հիմա կանգնում են նրանք, ում անվան մեջ լսվում է օ հնչյունը: Թվարկենք օ տառով այլ բառեր:

Խթանման փուլ :Առաջին ընթերցմամբ կարդում եմ Օо հնչյուն-տառի դասի առաջին մասը՝ ուշադրության հրավիրելով ամբողջ դասարանին: (Նկար 1) Երկրորդ անգամ՝ լուռ ընթերցմամբ կարդում են երեխաները: Վերջին՝ երրորդ անգամ ևս կարդում են 16 երեխաները՝ շարունակելով միմյանց: Այսպես ձևավորվում է նաև երեխաների ուշադրության կենտրոնացումը: Նոր հնչյունի ընկալման և բառի մեջ նրա տեղի որոշման նպատակով կատարում եմ օր և կինո բառերի հնչյունային վերլուծություն, գծում եմ բառերի գծապատկերները, նշում բոլոր ծանոթ տառերը, որոշում նորանծանոթ հնչյունների վանդակները երկու բառերում:Ապա հիշեցնում եմ, որ է (ե), է հնչյուն տառերի նման օ հնչյունի համար ևս հայերենն ունի երկու տառ՝ բառասկզբի օ, իսկ բառամիջում և բառավերջում օ լսելիս գրում ենք ո, կարդում օ: Այնուհետև ցույց եմ տալիս օ և ո տառերը,

ապա՝ Օ մեծատառը: Պաստառի վրա փակցված էր Օօ տառերը, և բառի պատկերներ, որոնք սկսվում էին օ տառով: Միասին բարձր արտասանում ենք բառերը: Ձեռքի շարժումներով գրում ենք օդում օ տառը, որից հետո գրատախտակին գրում եմ օ փոքրատառը և Օ մեծատառը՝ հաշվելով:

Ֆիզկուլտդադար: «Երգենք ինչպես խաղալիքներ»: Ընթացքը բացատրում եմ երեխաներին. «Ես հերթով խաղալիքները կբարձրացնեմ, դուք պիտի երգեք տվյալ խաղալիքին բնորոշ ձայնով»: Ես հերթով բարձրացնում եմ խաղալիքները՝ ինքնաշարժ, օդանավ, կատու, մուկ, օձ, մկնիկ, հեռախոս և այլն: Երեխաները խմբով ձայնում են պատասխանները:Խաղը կազմակերպվում է մեկ անգամ:

Իմաստի ընկալման փուլ: Սահիկի միջոցով պատմում եմ օրվա տառի նկար-պատմությունը, մեկնաբառերը՝ վանկատելով, բառերը, բառ-նկարները: Որից հետո աշակերտները նորից բացում են դասագրքերը և ես ևս մեկ անգամ կարդում եմ Օ օ հնչյուն տառի դասը, իսկ երեխաները կրկնում են: Աշխատանքային տետրի մեջ սկսում են գրել օ տառը, բառերը և բառակապակցությունները:

Կշռադատման փուլ: Ստացած գիտելիքներն ամբողջացնելու նպատակով կատարում եմ մտագրոհի մեթոդը: Գրատախտակի կենտրոնում փակցվում է պաստառ, որի վրա պատկերազարդ գրված է Օ տառը: Աշակերտներին հանձնարարվում է թվարկել օ տառով սկսվող բառեր, այդ բառերը ես գրում եմ կպչուն թղթի վրա և փակցնում օ տառի շուրջը:Երեխաները մեծ սիրով և պատրաստակամությամբ կկատարեն նաև էջ 94-ի վարժությունները՝ գտնել ավելորդը, լրացնել խաչբառը, բառախաղը, իսկ բազմակետերի մասին կխոսեմ հաջորդ՝ ամրապնդման դասին: (Նկար 2)

Վերջում կամփոփեմ .

-Երեխաներ ե՞րբ ենք օ տառը լսում և գրում, և ե՞րբ ենք լսում օ, բայց գրում ո:

Տնային հաձնարարություն Օօ հնչյուն տառի առաջին մասն ամբողջությամբ վարժ կարդալ, նկարի շուրջ հորինել պատմություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գրելու կարողությունների ձևավորման հարցում պետք է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի անհատականության առանձնահատկությունը, կարևորել այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ զննականությունը, գիտակցությունը և այլն:Միաժամանակ չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր երեխայի ձեռագիր խոսում է նրա հոգեկան գործընթացի զարգացման վիճակի մասին: Տառերի չափի ու դիրքի ընդգծված խախտումներ ունեցող երեխայի ձեռագրի ձևավորման ուղղությամբ ուսուցչի աշխատանքն արդյունք չի տալիս և հարկ է առաջանում դիմել հատուկ մանկավարժի օգնության: Գրելու կարողությունների ձևավորման արդյունավետության համար շատ կարևոր է ուսուցչի կողմից մեթոդական հնարների, վարժությունների և հետաքրքիր միջոցների կիրառումը:Գրուսուցման շրջանում շատ կարևոր է նաև դիդակտիկ նյութերի ճիշտ և տեղին օգտագործումը:Այբբենական շրջանում գրելու կարողությունների ճիշտ մշակմանը նպաստում է ավազի վրա գրելու, սեղանին մետաղալարերով կամ բրդյա թելերով աշխատելու կարողությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե.,2015, Զանգակ-97

2. Գյուլամիրյան Ջ. Հ., Ես սովորում եմ գրել, Ե.,2015, Զանգակ-97

3. Գյուլամիրյան Ջ. Հ., Խաղալով սովորենք, Ե.,2009, Զանգակ-97

4. Տեր-Գրիգորյան Ա.Ե. Հայոց լեզվի մեթոդիկա, Ե.,Լույս, 1980

5. Տեր-Գրիգորյան Ա.Ե. Աշխատանք այբբենարանով,Ե.,Լույս

6. Վ.Ա.Սարգսյան «Այբբենարան» 20 Հավելված Նկար 1 21 Նկար 2

ՀԱՎԵԼՎԱԾ

Նկար1

Նկար2